



REF.PA117/2024
Ֆանար, 4 Յունիս 2024

Յարգելի Ծնողք,

2023-2024 Կրթական Տարեշրջանի
Անավերջի Շրջաբերական

1. Անավերջի քննություն

- Քննությունները սկիզբ կ'առնեն, Հինգշաբթի 13 Յունիսին եւ կ'աւարտին 20-ին.:
- Հինգշաբթի 13-էն սկսեալ քննութեան օրերուն՝ աշակերտները կ'արձակուին 12:30-ին:
- Քննություններու նախապատրաստութեան համար դպրոցը փակ է Չորեքշաբթի 12 Յունիսին:
- Ուրբաթ 14-Յունիսը կը համարուի այս տարեշրջանի վերջին օրը մանկապարտեզի դասարաններուն, ինչպէս նաեւ մինչեւ երրորդ դասարան (Eб3), իսկ Հինգշաբթի 20-ը՝ բոլոր դպրոցին համար:

2. Քննություններու արդիւնքներ

Երեքշաբթի 2 Յուլիս 2024-ին, աշակերտներուն վիճակացոյցները պիտի տեղադրուին e-Skool կամ MS Teams հարթակի վրայ: Այն աշակերտը, որուն վիճակացոյցը չէ դրկուած, պարտի ներկայանալ իր ծնողքին հետ բաժանմունքի պատասխանատուին:

3. Հայցի ներկայացում

Տնօրէնուհին եւ բաժանմունքներու պատասխանատուները որեւէ հարցով ծնողները կ'ընդունին, Չորեքշաբթի 3 եւ Հինգշաբթի 4 Յուլիսին, առաւօտեան ժամը 8:30-էն 12:30:

4. Տեսչական գրասենեակներու եւ բաժանմունքներու

պատասխանատուներու ներկայութեան ժամանակացոյց

- 21 Յունիսէն 12 Յուլիս ամէն օր ժամը 8:30-էն 12:30:
- 16 Յուլիսէն 31 Յուլիս Երեքշաբթի եւ Չորեքշաբթի օրերը ժամը 8:30-էն 12:30:
- 3-էն 13 Սեպտեմբեր՝ Երկուշաբթիէն Ուրբաթ ժամը 8:00-էն 13:00:
- Ուրբաթ 13 Սեպտեմբերին դասագիրքերու առուծախ ժամը՝ 9:00-էն 12:00:

- 16 Սեպտեմբերին սկսեալ առօրեայ ներկայութիւն ընդունուած ժամանակացոյցով՝ 7:00-էն 14:30:

Գանձապահութեան գրասենեակը բաց պիտի ըլլայ Օգոստոս ամսու ընթացքին միայն Երեքշաբթի օրերը առաւօտեան ժամը 8:00-էն 13:00:

5. 2024-2025 Կրթական տարեշրջանի վերամուտ

- Երեքշաբթի 17 Սեպտեմբեր՝ իններորդէն աւարտական դասարաններ:
- Երեքշաբթի 24 Սեպտեմբեր՝ նախակրթարանի եւ միջնակարգի դասարաններ (առաջինէն ութերորդ):
- Չորեքշաբթի 25 Սեպտեմբեր՝ Մանկապարտեզի բոլոր դասարաններու աշակերտները կը ծանօթանան իրենց ուսուցչուհիներուն, ապա կը վերադառնան իրենց ծնողներուն հետ:
- Դպրոցին փոխադրակառքերը ապահովուած են 24 Սեպտեմբերին, դպրոցէն արձակուելու ժամուն 14:30. նոյն օրը առաւօտուն աշակերտները կու գան անհատական միջոցներով:

6. Արձանագրութիւն

Դպրոցական ներքին կեանքը լաւագոյնս կազմակերպելու առաջադրութեամբ, մեր յարգոյ ծնողներէն կը խնդրենք, որ իրենց զաւակներուն 2024-2025 կրթական տարեշրջանի արձանագրութիւնը կատարեն առաւելագոյնը մինչեւ 28 Յունիս 2024:

Չորեքշաբթի 3 Սեպտեմբեր 2024-ին առաջին թոշակներու հաշուեցոյցը պիտի տեղադրուի e-Skool հարթակի վրայ: Թոշակները կը վճարուին Երկուշաբթիէն՝ Ուրբաթ, առաւօտեան ժամը 7:30-էն 03:00:

Զեղչի դիմումագիրները կրնանք յանձնել գանձապահութեան՝ Սեպտեմբեր եւ Հոկտեմբեր ամիսներու ընթացքին:

7. Դպրոցական համագգեստ

Աշակերտներուն համար խստիւ կը թելադրուի դպրոցական համագգեստը, ինչպէս նաեւ մարզանքի տարազը՝ մարզանքի օրերուն միայն: Սեպտեմբեր 3-էն սկսեալ տարազները տրամադրելի պիտի ըլլան:

Գործակցութեան լաւագոյն մաղթանքներով՝

Տնօրէնութիւն